ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Աստրադեզ Բիօքսի	ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ	Ախտահանիչ միջոցն իրենից ներկայացնում է խտանյութ՝ անգույնից մինչև բաց դեղին գույնի, թափանցիկ, թույլ, յուրահատուկ հոտով հեղուկ: Որպես ազդող նյութ՝ պարունակում է 20,0±0,5% ջրածնի պերօքսիդ, 3,0±0,5% պոլիհեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդ (ՊՀՄԳ), 3,7±0,5% ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (ՉԱՄ), 0,10±0,01% պոլիհեքսմեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ (ՊՀՄԲ), ֆունկցիոնալ, կայունացնող և հակակոռոզիոն հավելումներ: Միջոցի պիտանելիության ժամկետը՝ պահպանման պայմաններին հետևելով և արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ 3 տարի է, աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս 25 օր: Միջոցի լուծույթներն օժտված են մանրէասպան ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչները՝ թեստավորված Mycobacterium terrae շտամի վրա, լեգիոնելոզի, հատուկ վտանգավոր վարակների՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և սիբիրյան խոցի (սպորասպան ազդեցություն)

			հարուցիչների), վիրուսասպան հատկություններով (արտաընդերային հեպատիտների, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի, ադենովիրուսի, էնտերովիրուսի, ռոտավիրուսի, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, պարագրիպի, հերպեսի, թռչնի A/H5N1 և խոզի H1N1 գրիպի, արտաընդերային և ընդերային հեպատիտի, Կոքսակի, ECHO, Էբոլայի, Զիկայի, Մարբուրգի և այլ հեմոռագիկ տենդերի վիրուսների նկատմամբ և այլն), սնկասպան հատկություններով սպորասպան հատկություններով և մանրէազերծիչ ազդեցությամբ: Կիրառվում է ցանկացած տեսակի մակերեսների, գույքի, սպասքի, սպիտակեղենի, օդի և այլն, ախտահանման և մաքրման համար, միջոցի հատկությունները պետք է թույլ տան համակցել մեկ գործողության մեջ մշակվող մակերեսների և օբյեկտների լվացումը, ախտահանումը և դեզոդորացումը: Միջոցը կիրառվում է նաև բժշկական գործիքների, այդ թվում՝ ջերմաանկայունների լվացման, ախտահանման համար; Էնդոսկոպերի և նրանց հետ օգտագործվող գործիքների լվացման, բարձր մակարդակի ախտահանման և մանրէազերծման համար: Ունի ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ: Մատակարարման պահին ապրանքի պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱՉ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
2			